

(1)Տես լրագրոյս նախընթաց թիւը :

(«Յիշեալ տարրոնայրն իբրև ամբոյ յառաջ՝ ՚ի սակա նեղ
կայստեթեան խրեանց , վասն սարսառաց և թանգութեան
երկրին՝ եկին յայտասիկ կտգմունա, յառաժդի աղատիցն՝ ՚ի
նեղութեանցն և թիթեանցն ՚ի սարսառցն : Այլ ախտ
եմբ զի Զանբ խրեանց ՚ի զերև ել . քանզի ո՛չ գտած ինչ
զտին սցսր և ո՛չ միտթ աղտեթ իւն ինչ : Այլ քնց հաւա

ուսին հիւանդացիան ջերմախոտիւ . ուստի և պարտաւորե-
լան դառնալ յաշխարհն իւրեանց . ուրոնոր յուսամբ թէ
յաջողեցի նոցա գործ ինչ :

ԱՂԲԱՏԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Այս Աստուածաճառոյ ընկերութիւնը թէպէտեւ
տարի մը կայ որ հիմնադրեցաւ իզմիրի մէջ քայց
զանազան արդէլքներու և դժուարութեանց պատա-
հէտով մտերս միայն կարողացաւ վաւերական կեր-
պիւ հաստատուիլ և սկսիլ իւր բարեգործութիւնները :

Աղքատաւիրաց ընկերութեան գլխաւոր նպատակն
է աղային հիւանդանոցէն դուրս գտնուող խեղճ
հիւանդաց և տնանկ աղքատաց օգնական ըլլալ և
անոնց դրամական միւլթարութիւն և բժշկական դար-
ման մատուցանել, ըստ չափու կարողութեան իւրոյ:
Այսպիսի Աստուածաճառոյ նպատակաւ հաստատեալ
ընկերութիւն մի . եթէ խոհեմութեամբ կառավար-
ուելու ըլլայ, ինչպէս որ կը յուսամք, ապա իրոյ
չունիմք թէ բոլոր հասարակութեան համակրութիւնը
և աղային երեւելաց ու հարստաց պաշտպանու-
թիւնը չուտով ձեռք պիտի բերէ : Բայց կը իրենեմք
խոհեմութիւն պէտք է հանդերձ յարաւարութեամբ .
և այս կերպիւ միայն յիշեալ ընկերութիւնը, նմա-
նապէս ուրիշ սրեւիցէ ընկերութիւն, կրնայ որ ըստ
օրէ յառաջագնի ծաղիլ և իւր նպատակին հասնիլ :

Աղքատաւիրաց ընկերութեան հիմնադրաց եռան-
դուն ջանքը անշուշտ զովութեան և շնորհակալու-
թեան արժանի են . և քաջայայտ եմք թէ հասարա-
կութեան առատ տրօքը և ողորմութեամբը ամենայն
յաջողութեամբ պիտի պատկուի ի միւլթարութիւն
աղային տնանկ աղքատաց և հիւանդաց :

Յիշեալ ընկերութեան վարչութեան անդամներն
կամ խորհրդական անդամներն հետեւեալներն են .

Պարոնայր

- Ստեփան Չէլիկեան,
- Գրիգոր Ս. Յ. Եսաւեան,
- Գալուստ Վէմեան,
- Սարգիս Ս. Չէլիկեան,
- Սահակ Աւետիքեան,
- Պօղոս Կ. Տիգրանեան,
- Յակոբ Գ. Սարգիսեան,
- Պօղոս Պէրճումեան, գանձապետ:
- Սարգիս Ս. Վ. Գանդուգեան, ատենադպիր:
- Յարութիւն Փափազեան, գանձապետ:

ԺԱՄԱՆՈՒՄՆ ԵՒ ՍԵՆԵՒԻՆ

ԲԱՐՁՐԱԳԱՏԻՒ ԿԱՂԵՍԻ ԻՇԽԱՆԻՆ

Մեծին Բրիտանիոյ գնահին մերձաւոր ժառանգ
բարձրագոյն Վալլէսի իշխանը, որ անմասնօք կեր-
պիւ և իրենքով սեպուհի անուամբ իբրեւ երեւելի
անձ մի ճանապարհորդութիւն կընէ, ամսոյս 6ին
կիրակի առաւօտուն հասաւ իզմիր Օլթոն կողմած
Անգղիոյ տէրութեան շողեւանով : Երբին արքայա-
զուն Բարձրութիւնը Լիփեստ գացած ըլլալով ուղ-
ղակի Գուշտասընէն կուգար, ուղեկցութեամբ ու-
րիշ երկու անգղիական շողեւանուց :

Իսկոյն որ Օլթոն շողեւանը երկաթ նետեց,
քաղաքիս ամրոցներէն ըստ սովորութեան թնդա-
նօթաց արձակմամբ, ողջունեցաւ և այս ողջունին պա-
տասխանը անմիջապէս արուեցաւ : Գանապետ, նա-
ւահանգիստս գտնուած գաղղիացի պատերազմական
նաւերը բաղմամբ թնդանօթաց արձակմամբ ողջու-
նեցին յիշեալ թագաւորանի իշխանին գալուստը :

Քաղաքիս Անգղիոյ հիւպատոս մեծաշուք միստր
Չէրլզ Պլէսթի փութացաւ շողեւանը երթալով իւր
խոնարհ յարգանքը և իւր ծառայութիւնը մատու-
ցանելու Երբին արքայազուն Բարձրութեանը . որ
բաղում սիրով ընկալաւ Անգղիոյ թագուհւոյն երեւ-
փոխանը : Ինչմը ետքը, քաղաքիս ընդհանուր կա-
ռավարիչ Մէհմէտ Բէշտ փաշան ևս, որ Անգ-
ղիոյ հիւպատոսարանը եկած էր ընկերութեամբ կա-
նոնաւոր զօրացողի մը, Օլթոն շողեւանը գնաց և
պատիւ ունեցաւ յիշեալ բարձրագոյն իշխանին
ներկայանալու . յորմէ սիրով ընդունուեցաւ :

Օղոստափայլ ճանապարհորդը կէսօրէն երեք
ժամ ետեւ ցամաքը ելաւ Անգղիոյ հիւպատոսարանին
ստիւն . ուր խոնարհ բաղմունքիւ ժողովուած էին և
կը փափագէին Երբին արքայազուն Բարձրութեան ե-

րեսը տեսնելու : Երբ հիւպատոսի իշխանը իւր բա-
րեհամբոյր քաղաք դէմքով և իւր զգեստուց սրա-
զութեամբը գարմացուց զամենքը :

Վալլէսի իշխանը Անգղիոյ հիւպատոսարանը քիչ
մը մնալէ ետեւ, ընկերութեամբ միստր Պլէսթի հիւ-
պատոսին, ծովեզերքի կողմէն մինչև Պուստուկ գե-
ղը պարտեալ գնաց և վերադարձաւ կամուրջի կողմէն
Հայոց թաղէն անցնելով : Այս պատյոն համար
մեր վերնափայլ կառավարիչը պատուական ձիեր
յուղորդած էր : Երբին արքայազուն Բարձրութեանը
ուղեկցի եղան մինչև Պուստուկ նաւ քաղաքիս մաք-
սապետ Շէմսէթ-Պէյը և Տեղական կառավարութե-
թարգման Տիրան Էփէնտին, որոնք Վալլէսի իշխա-
նին հրամանացը ներքէ գրուած էին վերնափայլ
Մէհմէտ փաշայէն :

Պուստուկայէն դառնալով, Մեծին Բրիտանիոյ
թագաւորանի իշխանը Անգղիոյ հիւպատոսարանը
քանի մը ժամ մնաց, և հաճեցաւ սիրով ընդունե-
լու իրեն մատուցուած զովացուցիչ մեծարանքը :
Երբին արքայազուն Բարձրութեանը ի նշան իւր
զոհունակութեանը և ի յիշատակ իւր այցելութեանը,
մարդասիրաբար շնորհեց մօսիւ Պլէսթի հիւպատո-
սին զինդանագիրը իւր օղոստափառ մօքը, իւր
հանգուցեալ փառաւոր յիշատակաց արժանի հօքը
և իւր կենդանագիրը :

Երբ իրոյն մեծաշուք միստր Չէրլզ Պլէսթի պատիւ
ունեցաւ կերակուր ուտելու ի սեղանին թագաւա-
նանք իշխանին, որ նոյն օրը կէս գիշերը 3 ժամ
անցած ճանապարհ ելաւ Կ. Պօլիս երթալու :

Վալլէսի իշխանը 1841 Նոյեմբերի 9ին ծնած է .
ըսելէ որ 21 տարին լրացնելու 5 ամիս կուգէ :

ՂԵՔԱՆԴՐԻՅԱՆ ԿՐԿՐԻՆ :

Բարձրագոյն Վոյիտ փաշային ձանձախ
հորդութեանը փայտը հասած լուրերը շատ
պանծալի են : Երբ իրոյն փոխարքայն Արիտէն
մեկնելու ժամանակը իւր վեհանձնական առա-
տաճեւանութեանը մեծ ասպայցից մի գտաւ,
5000 օսմանեան լիւս քննադէպ յիշեալ կողմէն
ընդհանուր կառավարչին ի շնորհակալութիւն
անոր քաղաքաւարական հիւրասիրութեանը :

Երբին Բարձրութեանը Նաբոլի մէջ փա-
ռաւոր ընդունելութիւն գտաւ Վիքտոր-Իմ
մանուէլ թագաւորէն, և մեկնելու ժամանակը
25,000 Ֆրանք թողուց վանն աղքատաց յիշեալ
մայրաքաղաքին :

Վոյիտ փաշան Հռոմի մէջ ևս մեծ պատուով
և գրեթէ թագաւորական փառաւորութեամբ
ընդունուեցաւ սրբաւոր Պապէն : Փոփաբայն
Չիլիթա-Վէլիայէն շողեւան մտաւ Գուշտ
երթալու : ուսկից ի ինն գնաց, ուր Վոյիտի
Յին հասաւ, իւր հետը եղած բոլոր օգնական
տարներովը :

Երբին մէջ հրատարակուած լը Սիւ-Բի-պ-
լէ անուն լրագիրը այսպէս կը գրէ, «Փոխար-
քայն շատ գէր անձ մըն է և բոլոր մարդերը թող
տուած է : Երբին Բարձրութեանը սե վերաբու-
րութեանը) հազած էր որուն վերայ կախուած
կըտեսնուէր Պատուոյ ի գէտնի մեծ պաշտօնա-
տարի շքանշանը : Գանապետ իւր հետը եղած
երեւելի պաշտօնատարաց մեծագոյն մասը նոյն
կարգին շքանշաններով պատուեալ անձինք են» :

Երբին Բարձրութեանը ամսոյս 8ին հասած
պիտի ըլլայ ի Փարիզ . ուր հրաւիրուած է
Պոլլէրի պալատը իջնելու : Երբեքն կայսր
յիշեալ պալատին մէջ Վոյիտ փաշային համար
նոյն սրահները սահմանած է, ուր որ Հռոմ
սոյի թագաւորը և թագուհին բնակեցան :

Կայսերական պալատին գլխաւոր պաշտօնա-
տարներէն երկու հոգի, մէսիէս տը Պուրկուան
և Պալլէ-Կաբոլէն Երբեքն հրամանացը հա-
մեմատ որոշուեցան փոխարքային ընդ առաջ
երթալու մինչև ի ինն :

Երբեքն ընդունելութիւններ տեղի ունե-
ցան ի Հռոմ ի կողմանէ մահմետականաց ու-
մանց ընդդէմ քրիստոնէից : Բաց յայտանէ
սուրը Յովնէփեան ընկերութեան կոյսերը հրա-
պարկաւ . թշնամանուեցան յիշեալ քաղաքին

փողոցայ մէջ, ուստի Վաղղիոյ հիւպատոսը մօ-
սիւ Հաթիբի տը Լաֆոս խնդրեց Հալէպի կա-
ռավարիչ Խոսէթ փաշայէն որ անմիջապէս պատ-
մէ զյանցաւորները : Բայց կառավարիչը զան-
ցառու թիւն ընելով, Վաղղիոյ հիւպատոսը գան-
դատեցաւ ի կոստանդնուպօլիս :

Բարձրագոյն Վեճ-Լապարգոսը իմանալով
այս ցաւալի եղելութիւնը, իսկոյն յանդիմա-
նութիւններ գրեց Հալէպի փաշային և միանա-
գամայն զրկեց փաշային պաշտօնէն, զոր չէր
կրցեր արժանաւոր կերպիւ և Բարձրագոյն Վե-
րան արդար և խաղաղասէր կամեցողութեանը
համեմատ վարելու :

Բոս հրամանաց օգոստափառ Սուլթանին,
Հալէպի կառավարչութիւնը Երբեքն իմ կա-
ռավարիչ Սուրբէյա փաշային յանձնուեցաւ .
որ հաստատամիտ, գործունեաց և արդարասէր
պաշտօնատար մըն է : ուստի տարակոյս չկայ թէ
Հալէպի բնակիչները մեծ սիրով և բազում ու-
րախութեամբ պիտի ընդունին իրենց նոր կա-
ռավարիչը :

Ստերս ահագին հրկիզութիւն մի ի մոխիր
դարձուց Հռոմ տոյի Օվերիէն նահանգին Լե-
նուշտ քաղաքը : Բանի մը եկեղեցի, բանալի-
մանելու շար շաքէշարժ գործարան, տասնեակ
գործատուն օտայնականութեան (Ջուհարք) և
շատ ներկարաններ, նմանապէս քաղաքին տու-
ներուն ութ բաժինէն եօթը բաժինը հրոյ ճա-
րակ եղան : Հինգ հազար հոգիէն աւելի առանց
աղոստանարանի կը գտնուէին, առանց ապրուստի
և առանց աշխատելու միջոցներ ունենալու :
Ըստորում ամեն ստացուածքին կորուսին : Այս
հրկիզութեան պատճառած փնտր քանի մը մի-
լիոն ֆրանկի կը հասնի կրեւն :

Հրեքէն այնքան մեծ և ընդարձակ էր, և
արեւան շուտով ճարակեց ամեն բան, որ ի
սկզբան կարծուեցաւ թէ եղեւնագործ անձանց
ձեռք գրուած է կրակը : Բայց բարեբաղդու-
թեամբ այս կասկածները անհիմն էին :

Կը հաստատեն թէ Իտալիոյ թագաւորին որ-
դիրը բարձրագոյն իշխանութիւն և Սեպե իշ-
խանները Յունիս ամսոյն առջի օրերը երկար
ճանապարհորդութիւն մի պիտի ընեն . նախ
Սարտեհի կղզին պիտի երթան, յետոյ Եւրօլիս
անկէց Սիկիլիա, Կ. Պօլիս և Երբեքն երթալ
լու են : Երբին արքայազուն Բարձրութեանը
այս ճանապարհորդութեանը մէջ ընկերացեալ
պիտի ըլլան Սիմոնտա կոմսէն, որ ձերակուսի
անդամ է :

Մեծին Բրիտանիոյ եկամտից տեսուչ միստր
Կլէտթըն մօտերս աղքային երեսփոխանաց
խորհրդանոցին ներկայացուց տէրութեան եկա-
մտից և ծախսոց հաշուեցուցակը վրան 1862
ամին : Այս ցուցակին համեմատ եկամուտը
պիտի ըլլայ 1754 միլիոն 750 հազար Ֆրանք և
ծախքը 1751 միլիոն . ըսելէ որ 4 միլիոն Ֆրանքի
չափ աւելորդ եկամուտ պիտի մնայ :

Ստերս Դորձ Նիպոտի տնուն ամերիկացի վաճ
ճառականը, որ Սասաբուղէթս վիճակին մէջ
Տէնիլէր քաղաքը ծնած է, քսանեկնից տարիէ
ի վեր Երբեքն գտնուելով և ինտոն մայրա-
քաղաքը հաստատած ըլլալով իւր բնակութիւնը
խիտ մեծ հարստութիւն ձեռք բերաւ վաճա-
ւականութեամբ :

Յիշեալ մեծահարուստ պատուական անձը
մօտերս կը պատրաստուի իւր հայրենիքը վերա-
դառնալ և ի հանգստութեան վայելելու իւր
ճոխութիւնը : Բայց իւր մեկնելէն յառաջ
յանկալով իւր երախտագիտութեան մէկ ասպա-
ցոյցը տալ ինտոն քաղաքին և անգղիացի
ժողովրդէան, որ մարդասիրութեամբ ընդունած
էին զինքը, հաճեցաւ հարկը յիսուն հազար լի-
ռա սթէրլին թողուլ աղքատաց համար :

Ստամ Կանսի Սիթ ամերիկացի տիկինը
անցի աշխարհ հրապարակական ժողովոյ (միթինկ)
մը մէջ այսպէս խօսեցաւ . «Կանայք շատ ըն-
դարձակ արտօնութիւններ ունին Վերիկայի
մէջ, և եթէ մինչև ցայսօր զուրկ մնացին հա-
սարակաց պաշտօններ կատարելէ, այս բանը ի՞նչ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱԼՈՒՍՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ